

ՓՈՒՊՈՒՍՏՎԱՍՏՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ,
ՄՇԱԿԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՓՈՒՊՈՒՍՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է կենդանի կամ դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխապատվաստման կարգը:

2. Կենդանի դոնորից կամ դիակային դոնորից փոխապատվաստման նպատակով վերցվում են միայն այն օրգանները և (կամ) հյուսվածքները, որոնք ընդգրկված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի N 502-Ն որոշմամբ սահմանված՝ փոխապատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկում:

3. Կենդանի դոնորից կամ դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը, մշակելը և փոխապատվաստելը կարող է իրականացվել միայն համապատասխան տեսակի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար լիցենզավորված բժշկական հաստատությունների կողմից (այսուհետ՝ բժշկական հաստատություն):

4. Օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու և փոխապատվաստումն իրականացնելու բժշկական ուղեցույցները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

II. ՓՈՒՊՈՒՍՏՎԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆԴԱՆԻ ԴՈՆՈՐԻՑ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՇԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Բժշկական հաստատությունում փոխապատվաստման նպատակով կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցվում են միայն այն դեպքում, եթե՝

1) առկա է կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հնարավորության մասին եզրակացություն՝ տրված Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 132-Ն որոշմամբ սահմանված կարգով:

2) առկա է կենդանի դոնորի գրավոր համաձայնությունը:

3) վիրահատությանը նախորդող 15-օրյա ժամկետում դոնորը գրավոր նախազգուշացվել է սպասվելիք վիրահատական միջամտության բոլոր հնարավոր բարդությունների հավանականության և պոտենցիալ ռիսկի մասին:

6. Կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ կարող է վերցնել միայն համապատասխան մասնագիտացում ունեցող բժիշկների, միջին և կրտսեր բուժանձնակազմի խումբը: Կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցվում են յուրաքանչյուր օրգանի և (կամ) հյուսվածքի համար սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված բժշկական ուղեցույցների համաձայն:

7. Կենդանի դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուց հետո կազմվում է արձանագրություն օրգանի և (կամ) հյուսվածքի որակի վերաբերյալ, որը կցվում է կենդանի դոնորի, իսկ պատճենը՝ ռեցիպիենտի հիվանդության պատմությանը:

8. Կենդանի դոնորից վերցված օրգանները և (կամ) հյուսվածքները ենթարկվում են համապատասխան մշակման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

III. ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԻԱԿԱՅԻՆ ԴՈՆՈՐԻՑ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՇԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնում է միայն համապատասխան մասնագիտացում ունեցող բժիշկների, միջին ու կրտսեր բուժանձնակազմի խումբը: Նշված խմբում ընդգրկվում են բժիշկ-անեսթեզիոլոգ, վիրաբույժ, բուժքույրեր, դատական բժիշկ կամ պաթանատոմ: Անհրաժեշտության

դեպքում բժշկական հաստատության տնօրենի հրամանով բուժանձնակազմի խմբում կարող են ընդգրկվել նաև այլ բժիշկ-մասնագետներ: Բուժանձնակազմի խմբի մեջ չեն ընդգրկվում այն բժիշկները, ովքեր մասնակցել են դոնորի ուղեղային մահվան հաստատմանը:

10. Դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուց հետո լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1260 - Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված ձևի ակտ դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու մասին: Ակտը վավերացվում է բժշկական հաստատության կնիքով: Ակտը կցվում է դիակային դոնորի հիվանդության պատմությանը, իսկ պատճենն ուղարկվում է օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստր:

11. Դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուց հետո կազմվում է արձանագրություն յուրաքանչյուր վերցված օրգանի և (կամ) հյուսվածքի որակի վերաբերյալ, որը կցվում է դիակային դոնորի հիվանդության պատմությանը, իսկ պատճենը` ռեցիպիենտի հիվանդության պատմությանը:

13. Դիակային դոնորից վերցված օրգանները և (կամ) հյուսվածքները ենթարկվում են համապատասխան մշակման` Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

IV. ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՎԱԾՔՆԵՐԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Համապատասխան մշակման ենթարկված օրգանները և (կամ) հյուսվածքները փաթեթավորվում են համապատասխան ջերմային ռեժիմ սպահովող տեղափոխման արկղի կամ պայուսակի մեջ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N1260-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված ձևի օրգանների և (կամ) հյուսվածքների տեղափոխման հայտարարագրի լրացումից հետո օրգանները և (կամ)

հյուսվածքները տեղափոխվում են այն բժշկական հաստատություն, որտեղ իրականացվելու է օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստումը:

15. Օրգանի և (կամ) հյուսվածքի տեղափոխման դեպքում, տեղափոխման հայտարարագրի հետ միասին, փոխպատվաստումն իրականացնող բժշկական հաստատություն են ուղարկվում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգով տրված դիակային դոնորի մասին և վերցված օրգանի և (կամ) հյուսվածքի որակի վերաբերյալ տեղեկանքների պատճենները:

16. Փոխպատվաստումն իրականացնող բժշկական հաստատությունում տեղափոխման արկղը կամ պայուսակը բացելուց հետո փոխպատվաստումն իրականացնող բժշկական հաստատության տնօրենի կողմից լիազորած անձի կողմից լրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 1260 -Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված ձևի ընդունման ակտ՝ փոխպատվաստման նպատակով դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների: Ընդունման ակտը լրացվում է 2 օրինակով, որոնցից մեկը պահվում է փոխպատվաստումն իրականացնող բժշկական հաստատությունում, իսկ մյուսն ուղարկվում է օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստր:

17. Վերցված օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստումն իրականացվում է միայն համապատասխան պատրաստվածություն ունեցող բժիշկների, միջին և կրտսեր բուժանձնակազմի խմբի կողմից: Դիակային դոնորի դեպքում նշված բժշկական խմբի մեջ չեն կարող ընդգրկված լինել այն բժիշկները, ովքեր մասնակցել են դոնորի ուղեղային մահվան հաստատմանը:

18. Վերցված օրգանների և (կամ) հյուսվածքների փոխպատվաստումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

19. Փոխպատվաստումն իրականացնող բժշկական հաստատությունում կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանները և (կամ) հյուսվածքները փոխպատվաստվում են, եթե՝

1) առկա է փոխապատվաստման անհրաժեշտության մասին բժշկական եզրակացություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 131-Ն որոշմամբ սահմանված կարգի.

2) առկա է ռեցիպիենտի գրավոր համաձայնությունը.

3) վիրահատությանը նախորդող 15-օրյա ժամկետում ռեցիպիենտը գրավոր նախագրուշացվել է սպասվելիք վիրահատական միջամտության հետ կապված հնարավոր բարդությունների և պոտենցիալ ռիսկի մասին:

20. Փոխապատվաստումն իրականացնելուց հետո բժշկական հաստատության տնօրենն օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստրին համապատասխան գրավոր տեղեկատվություն է հաղորդում ռեցիպիենտի և կատարված օրգանի և (կամ) հյուսվածքի փոխապատվաստման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

----- (բժշկական
հաստատություն անվանումը)

Ա Կ Տ

դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ
վերցնելու մասին

Դոնորի անունը, ազգանունը, հայրանունը-----
տարիքը

Դիակային դոնորից օրգան (օրգաններ) և (կամ) հյուսվածք (հյուսվածքներ)՝ -----

(նշվում է (են) օրգանի (օրգաններ) և (կամ) հյուսվածքի(հյուսվածքներ) անվանումները)

վերցնելն իրականացվել է դոնորի ուղեղային մահվան հաստատումն արձանագրելուց
հետո՝

-----:

Օրգանը (օրգաններ) և (կամ) հյուսվածքը (հյուսվածքներ) վերցվել են -----՝

(նշվում է բժշկական հաստատությունը, բժշկի (բժիշկներ) պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

-----կողմից:

Օրգանի (օրգաններ) և (կամ) հյուսվածքի (հյուսվածքներ) վերցման վիրահատության կարճ նկարագիրը` -----

Վիրահատության սկիզբը`-----ավարտը`-----

-----:

Օրգանի (օրգաններ) և (կամ) հյուսվածքի (հյուսվածքներ) վերցման վիրահատությանը մասնակցել են նաև`

վիրաբույժներ`-----

----- (նշվում է բժշկական հաստատությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

անեսթեզիոլոգ`-----

----- (նշվում է բժշկական հաստատությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

վիրաբուժական բուժքույր`-----

----- (նշվում է բժշկական հաստատությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

վերակենդանացման բաժանմունքի պատասխանատու բժիշկ`-----

(նշվում է բժշկական հաստատությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Օրգանի (օրգաններ) և (կամ) հյուսվածքի (հյուսվածքներ) վերցմանը ներկա է գտնվել
դաստաբժշկական փորձագետ կամ պաթանատոմ

(նշվում է բժշկական հաստատությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Բժշկական հաստատության տնօրեն-----

(նշվում է բժշկական հաստատությունը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

օրգանների և (կամ) հյուսվածքների տեղափոխման

(բժշկական հաստատության անվանումը, որտեղ վերցվել է օրգանը և (կամ) հյուսվածքը)

Գտնվելու վայրը-----

Հեռախոսահամարը և ֆաքսի համարը-----

օրը/ամիսը/տարին----- ժամը-----

Սույն հայտարարագրով հավաստում եմ, որ-----
(օրգանի (կամ) հյուսվածքի անվանումը)

(արկղում փաթեթների քանակը)

փաթեթավորվել է պահանջվող արկղում (պայուսակում): Արկղը (պայուսակը) փակման պահից գտնվել է խիստ հսկողության ներքո: Չի խախտվել արկղի (պայուսակի) ամբողջականությունը և պահանջվող ջերմային ռեժիմը: Տեղափոխման պահից որևէ անձի կամ բնույթի կողմնակի միջամտություն չի կատարվել:

-----տեղափոխվելու է-----
(օրգանի և (կամ) հյուսվածքի անվանումը)

(բժշկական հաստատության անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը և ֆաքսի համարը)

Տեղափոխումն իրականացրել է

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ը Ն Դ Ո Ի Ն Մ Ա Ն Ա Կ Տ

փոխպատվաստման նպատակով դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների

Օրը, ամիսը, տարին -----20-----թ. Ժամը-----

Տեղափոխման արկղը (պայուսակը) ամբողջական է՝ այո ոչ

Դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների անվանումները

(բժշկական հաստատության անվանումը, որտեղից տեղափոխվել է օրգանը և (կամ) հյուսվածքը)

Գտնվելու վայրը -----

Հեռախոսահամարը, ֆաքսի համարը -----

(տեղափոխված օրգանը և (կամ) հյուսվածքն ընդունող բժշկական հաստատության անվանումը)

Գտնվելու վայրը-----

Հեռախոսահամարը, ֆաքսի համարը -----

Հատուկ նշումներ-----

.....
(տեղափոխումն իրականացնող
բժշկական հաստատության
լիազորած անձի ստորագրությունը,
անունը, ազգանունը)

(ընդունումն իրականացնող
բժշկական հաստատության
լիազորած անձի ստորագրությունը,
անունը, ազգանունը)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ